սակալին տալ միայն զսահմանեալն, որք էին սայիդ, սահ-մաքէք, խարաճ սահմանեալ. 4000 դահեկան իբր ծախս 'ի չորս նուագս տարւոյն, և էրդիւ 1375 դահեկան, որ եհաս յաւուրս Ճէզար Փաշայի 25,000. զոնէ այսուհետեւ զսոյն գումար հատուցանել. իսկ 'ի բաղմանալ վիճմանց եւ նեղութեանց, ազգ արասցեն 'ի Կոստանդինուպոլիս. զի նոքա գտցեն զհնարն, ապա պատուիրեցին փութով ժամանել 'ի մայրաքաղաքն Մարկոս և Յարութիւն եպիսկոպոսաց և թարգման Աւետիսին, գրել առ Սիմէոն, Դիոնէսիոս եւ Կարապետ վարդապետս, որք գնացեալ էին յիջմիածին, զի զկնի ձեռնադրութեան նոցին յաստիճան եպիսկոպոսութեան սճապարեսցեն դառնալ 'ի թագաւորեալ քաղաքն, նոյնպէս առ Գարրիէլ եպիսկոպոս Նուիրակն Զմիւռնիոյ, եւ առ Մկրտիչ եպիսկոպոս Նուիրակն Տփխիսու, թողեալ զգործս իւրեանց փութասցեն անդ. զի գլխաւորք ազգին խորհեսցին ընդ նոսա իբր երեւելի գործակալս Աթոռոյն, և տնօրինեսցեն զօգուտ նորին. բերել յԵրուսաղեմ զտուփարս պարտուց, զի առաջի ամենեցուն բացցին վէրք տանն, զի մարթասցին հնարել զօրեղ սպեղանիս։ Սկիզբն խորհրդոյն կամեցան հրաւիրել զնոյն ինքն զԹէոդորոս Պատրիարք, այլ հայեցեալ յայս ծերութեան նորին խնայեցին 'ի նա, և զի մի վտանգ ինչ դիպեսցի 'ի պարտատեարց անպատուել զնա իբր փախստական. այլ բաւական համարեցին կոչել զեօթն եպիսկոպոսունս և զԹարգմանն, և զոր ինչ սահմանեսցեն 'ի խորհրդեան, լիցի ընդունելի ամենեցուն։

Զայս ամենայն գրեալ ծանոյց Պօղոս եպիսկոպոս առ Թէոդորոս Պատրիարք, և յորդորէր զնա փութանակի հանել 'ի ճանապարհ զվարդապետս եւ մի ընդդիմանալ կամաց ազգին, զի մի յետս կացցեն, յայնժամ չլինի օգնութիւն յուստեքէ, որով լինի վտանգն չարաչար և խորտակումն մեծ. ոչ Պատրիարքն եւ ոչ Ամիրայք գրեցին գիր առ Թէոդորոս, զի տակաւին տիրէր երկպառակութիւն 'ի միջի նոցա. և ոմանք իսկ չկամէին յուզել զխնդիրն Երուսաղէմի, այլ ակամայ կամաք զիջան յայս խորհուրդ (1815. յ9 Յունիսի)։

Իսկ երեքին վարդապետաքն հասեալ յիջմիածին ձեռ-